

ՀԱՅ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԶԵՌԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԼՎԱԾՔՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Բ. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պարթևա-հռոմեական ռազմաքաղաքական հակամարտությունը Հայաստանում մ. թ. I դարում ի վերջո ավարտվեց պարթև Արշակունիների հարստության ներկայացուցչի հայկական գահ բարձրանալով: Հայ ավագանու աջակցությամբ, որը կամենում էր հայկական գահը Արշակունյաց հարստության ներկայացուցչին տալու միջոցով հիմք դնել տեղական հարստության և վերականգնել մեծ Հայքի թագավորության երբեմնի հզորությունը, հայկական գահին տիրացավ պարթևական թագավոր Վաղարշի եղբայր Տրդատը, որը և հիմք դրեց հայ Արշակունիների արքայական հարստությանը: Արյունահեղ կռիվներից հետո Տրդատի իշխանությունը Մեծ Հայքում ճանաչեց Հռոմը, պայմանով, որ Հայաստանի Արշակունի գահակալը թագն ստանա հռոմեական կայսրից Հռոմում: Պարթև Արշակունիների հարստության ներկայացուցիչները տարբեր ժամանակներում հաստատվեցին նաև Մազքթաց ու Քուշանաց թագավորություններում և Պարթևական թագավորության տարբեր երկրամասերում, սակայն Արշակունիների հարստության բազմաճյուղ համակարգում առանձնահատուկ, առավել բարձր դիրք զբաղեցնում էին Մեծ Հայքի Արշակունիները: Թագավորելով Մեծ Հայքում և միայն անվանապես ճանաչելով պարթև Արշակունիների ավագությունը, հայ Արշակունիները միաժամանակ համարվում էին Պարթևական թագավորության երկրորդը: Այսպես, Մովսես Խորենացին, որի «Պատմութիւն Հայոց»-ում շատ հաճախ ավանդական Վաղարշակ թագավորը նույնանում է Տրդատ I-ի հետ, գրում է. «...ապա Արշակ նորին որդի, որ կոչեցան մեծ, որ զԱնտիոքոսն հսպան և զՎաղարշակ զեղբայր իւր թագաւոր կացոյց Հայոց, երկրորդ իւր առնելով»¹: Հայ և Պարթևական թագավորությունների փոխհարաբերությունների հիշյալ իրավական կացությունը լավ է արտահայտված Ագաթանգեղոսի երկում. «Խոսորով թագաւորն Հայոց, որ էր երկրորդ տէրութեանն Պարսից», դի որ Հայոց թագաւոր էր՝ նա էր երկրորդ Պարսից տէրութեանն»²: Ինչպես նկատել է Ս. Նրեմյանը, Տրդատ I Արշակունու կողմից պարթևական արքունիքում Արշակունիների «երկրորդական գահը» զբաղեցնելը դիտվում էր իբրև գործակալական ծառայություն, որի համար հայոց թագավորը ստանում է «երկիր ձեռական իշխանութեան»³: Շարունակելով իր միտքը զարգացնել, հեղինակը գրում է, որ մ. թ. 54 թ., երբ Տրդատը Վաղարշի կողմից բարձրացվեց հայկական գահին, Մեծ Հայքին որպես ձեռական իշխանության երկիր միացվեց Ասորյա-ալանի մասը կազմող մի ընդարձակ տարածք, որը IV դարում պատկանում

¹ Մովսես Խորենացի. Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1913, II, 49:

² «Պարսից տէրութիւն» արտահայտության առկայությունը կարելի է բացատրել երկու կերպ. առաջին, որ հայերը ավանդույթի ուժով շարունակում էին «Պարսից» կոչել Պարսկաստանում հաստատված Պարթևական թագավորությունը, և երկրորդ, որ այն արդյունք է սասանյան ժամանակաշրջանի ազդեցության:

³ Ագաթանգեղոս. Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1909, § 18:

⁴ Ս. Ն. Նրեմյան. Պայմանական հողատիրության առաջացման հարցի շուրջը ֆեոդալականացող Հայաստանում.— «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 1, էջ 5:

էր Հայ Արևելագիտության ինստիտուտի և Հայաստանի Բուհական խորհրդի⁵ Սակայն մեզ այլ կապակցությամբ կրկին անդրադառնալով ձեռնարկի ինստիտուտի կազմակերպչական, նա ընդգծում է, որ Հիշյալ տարածքը մեծ էր Մեծ Հայքից դուրս և պատկանում էր անձամբ Տրդատ I-ին, իսկ նրանից հետո՝ Հայաստանում թագավորած բոլոր Արևելագիտության գահակալներին⁶։ Անշուշտ, ճիշտ է երկրորդ տեսակետը, որովհետև վարչաիրավական առումով ձեռնարկի ինստիտուտի կազմակերպչական, պատկանելիության հանդերձ Հայ Արևելագիտության ինստիտուտը, մինչև 226 թ. պետք է համարվեն Պարթևական թագավորության տարածք, հետևաբար անմիջականորեն Մեծ Հայքի մեջ մտնել չէին կարող։ Սակայն, ինչպես ստորև կտեսնենք, Հիշյալ կազմակերպչական վարչաիրավական կազմակերպչական 226 թ. հետո որոշակի փոփոխություններ կրեց։

Ս. Երեմյանի կարծիքով, դատելով հունա-հռոմեական սկզբնաղբյուրների տեղեկություններից, Հռոմեացի դաշնագրից և Հռոմում թագադրվելու հանդեսներից հետո Տրդատ I-ը պիտի ներդնեցնեցնեց կայսրից ստանալ կազմակերպչական, որոնք մնացին Մեծ Հայքի գահակալների տնօրինության ներքո մինչև Հայաստանի 387 թ. բաժանումը։ Հեղինակը նշում է, որ Հայ Արևելագիտության ձեռնարկի ինստիտուտի երկրները Հռոմեական կայսրության սահմաններում գտնվում էին Կապադովկիայում, սակայն նրանց տեղադրությունը որոշել հնարավոր չէ⁷։ Հայ թագավորների Հռոմի կազմում ունեցած կազմակերպչական, ըստ Ս. Երեմյանի, Արշակ III-ի մահից հետո (391 թ.), երբ կայսրությունը վերացրեց Հայ Արևելագիտության թագավորությունը Մեծ Հայքի Հռոմին անցած հատվածում, հավանաբար գրավվեցին հարթունիս կամ էլ տրվեցին մեկ ուրիշ վասսալի⁸։ Սակայն 1976 թ. «Հայկական Սովետական հանրագիտարանում լույս տեսած իր «Արևելագիտության թագավորությունը 298—387 թթ.» քարտեզում նա հայագիտության մեջ առաջին անգամ, մեղ անհայտ նյութերի հիման վրա որոշակիացրեց և տեղագրեց Հիշյալ կազմակերպչական նրա տեղորոշմամբ Հիշյալ կազմակերպչական մեջ էին մտնում պտղոմեոսյան Փոքր Հայքի տարածքը իր հինգ գորավարություններով և Աբառնե-Վաղարշակուպոլիս-Ջերմուկի Գիմաթենե գավառով⁹։ Այս նոր տեսակետը իր արտացոլումն է գտել հեղինակի հետագա քարտեզներում և աշխատություններում¹⁰։ Քարտեզը որպես այդպիսին հեղինակին հնարավորություն չի տալիս բացահայտելու իր աշխատանքային խոհանոցը և նա քարտեզի բացատրականում սեղմ նշել է, որ Հիշյալ կազմակերպչական Հայ Արևելագիտության ստանում էին որպես «ձեռնարկի ինստիտուտի» երկիր հռոմեական կայսրներից։ Հասկանալի է, որ այդ փաստորեն անհնարին էր կատարել նաև հանրագիտարանային հոդվածի սուղ շրջանակներում, ուստի թվում էր, որ Հիշյալ խիստ կարևոր տեսակետի գիտական հիմնավոր բացատրությունը տեղ կգտնի ՀՍՍՀ ԳԱ հրատարակած «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակում։ Սակայն, ավագ, այնտեղ և Ս. Երեմյանը, կրկին առանց անդրադառնալու իր օգտագործած սկզբնական աղբյուրներին, աշխատանքի մեթոդին և ուսումնասիրության խոհանոցին, գրում է, որ «Հայոց թագավորի կայսրության սահմաններում գտնվող կազմակերպչական էին՝ Փոքր Հայքն ու Գիմաթենե գավառը» և վկայակոչում է իր

5 Նույն տեղում, էջ 6։

6 Նույն տեղում։

7 Նույն տեղում։ Սխալ է «Հռոմեացի դաշնագրի» արտահայտությունը։

8 Նույն տեղում։

9 Ս. Ս. Երեմյան. Արևելագիտության թագավորությունը 298—387 թթ. (քարտեզ). ՀՍՀ, հ. 2, Երևան, 1976, էջ 112։ Տե՛ս նաև Ս. Ս. Երեմյան. Հայ Արևելագիտության.—ՀՍՀ, հ. 2, էջ 107—108։

10 Ս. Ս. Երեմյան. Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298—385 թթ.). Ուսումնական քարտեզ. Երևան, 1979։ Հայ ժողովրդի պատմություն. հ. 2, Երևան, 1984, էջ 93։ Տե՛ս նաև գրքին կից «Մեծ Հայքի թագավորությունը IV դ. (298—385 թթ.)» քարտեզը։

«Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298—385 թթ.)» ուսումնական քարտեզը¹¹։

Հայ Արշակունիների ձեռնարկյա իշխանության կալվածքների իրավական հասցույթյան և տեղադրության հարցերը որոշակի կարևորություն են ներկայացնում հայագիտության համար, որոնց քննությանն էլ նվիրված է սույն հոդվածը։

Արդ, որտե՞ղ էին գտնվում հիշյալ կալվածքները։ Փավստոս Բուզանդի մի արժեքավոր տեղեկության համաձայն հայ Արշակունիները «ձեռնարկյա իշխանության» երկիր ունեին Ատրպատականում. «Յետ այսորիկ ապստամբեաց ի թագաւորէն Հայոց (Արշակ II-ի դեմ—Բ.Հ.) և ձեռին իշխանութեանն տանն Հայոց թագաւորին, որ էր զԱտրպայական աշխարհան»¹²։ Երբ հայ ժողովրդի ազատագրական պայքարը պարսից զավթիչների դեմ ավարտվեց հաջողությամբ, Պապ թագավորի հրամանով հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը, ի թիվս այլ ապստամբած երկրամասերի, Մեծ Հայքի թագավորությունը միացրեց նաև հայոց թագավորների ատրպատականյան կալվածքները և վերականգնեց հայոց թագավորության տարածքային ամբողջականությունը. «Նախ հարկանէր (սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը—Բ. Հ.) գտուն թագաւորին Հայոց, որ յԱտրպայականին էր, զամենայն երկիրն գաւառացն Ատրպատճառն աւերէր, և առնոյր գերէր բազում գերութիւն ի նոցանէ, և դմընացորդսն նուաճէր և ի հարկի կացուողանէր, և առնոյր զբազումս պանդանդս ի նոցանէ»¹³։ Ցավոք, բերված տեղեկություններից կարելի է եզրակացնել միայն, որ հայոց թագավորների կալվածքները գտնվում էին Ատրպատականում և սահմանակցում էին բուն Մեծ Հայքի հողերին, սակայն մասնավորապես ո՞ր շրջանում, մնում է անհայտ։ Կարծում ենք, որ հարցիս քննության վրա լույս են սփռում Փավստոս Բուզանդի այլ տեղեկությունները։ Անդրադառնալով Արշակ II-ի օրոք մղված հայ-պարսկական պատերազմներին, նա երիցս հիշատակում է Թավրեշ (այժմ՝ Թավրիզ) քաղաքը Պարսից տերության սահմաններում. «Այլ թագաւորն Պարսից հանդերձ ամենայն իւրովք զբոքն ի ժամանակի անդ յայնմիկ քանզի և նա խաղացեալ գայր ի վերայ Հայաստան երկրին ընդդէմ սոցա (Արշակ II-ի և Վասակ Մամիկոնյանի դեմ—Բ. Հ.), ապա սոքա փութացեալք հասանէին յԱտրպատական, և գտանէին զբանակն արքային Պարսից ի Թաւրէշ բանակեալ»¹⁴։

«Յետ այսորիկ Բոյեկան մեծ նախարար Պարսից, և քառասուն բեր ընդ էմա, գային հասանէին յԱտրպատական. կամէին ասպատակ առնել յերկիրն Հայոց։ Ապա զառաջօք անգանէր Վասակ իւրով Հայաստան գնդան, հարկանէր զգորսն ամենայն Պարսից, և զԲոյեկանն սպանանէր ի Թաւրէշն։ Եւ արէր անդ զապարանս թագաւորին Պարսից. և դտեալ անդ զպատկեր թագաւորին Պարսից, նետաձիգ եղեալ՝ նետալից առնէր»¹⁵։

«... (Մուշեղ Մամիկոնյանը—Բ. Հ.) երթեալ նստել ի սահմանս Ատրպատճացն, և պահել զաշխարհն Հայոց։ Ապա յայնմ ժամանակի կաղմեալք պատրաստեցաւ Շապուհ արքայ Պարսից ամենայն կազմութեամբ զօրովք իւրովք, և կն հնա յերկիրն Ատրպայականի. և Մերութանն առաջնորդ գնդին բանակի նորա, և բուն բանակն ուրեմն թագաւորին ի Թաւրէշն բնակեալ էին»¹⁶։

Բերված վկայություններից աներկբա է այն եզրակացությունը, որ Թավրեշ քաղաքը, որտեղ գտնվում էր պարսից թագավորի ապարանքը, պատկանում էր Սասանյան Պարսկաստանին և գտնվում էր Մեծ Հայքի թագավորության պետական սահմանից ոչ հեռու։ Այլ խոսքով, հայ-պարսկական սահման-

11 Հայ ժողովրդի պատմություն. հ. 2, էջ 93։

12 Փավստոս Բուզանդ. Պատմութիւն Հայոց. Վենետիկ, 1832, IV, Ծ։

13 Նույն տեղում, V, Ը։

14 Նույն տեղում, IV, ԻԾ։

15 Նույն տեղում, IV, ԼԹ։

16 Նույն տեղում, V, Բ։

նադիժը պետք է անցնեն թավրեշի արևմտակողմով և հյուսիսակողմով, Թավրիշ-Թավրեշի Պարսից տերության մեջ գտնվելը և Պետինգերյան քարտեզի տվյալները, ընայած այլ փաստերին և տեղեկություններին, Հ. Մանանդյանին բերել են այն մտքին, որ հայ-պարսկական սահմանագիծն անցել է Tarspedo-Saspidiցի 45 հոմակական մղոն կամ շուրջ 67 կիլոմետր դեպի հարավ-արևելք՝ ալմյան Աշի-շայ գետով¹⁷։ Ելնելով մղոնաչափերի փոփոխությունից Հ. Մանանդյանը եզրակացրել է, որ Պետինգերյան քարտեզի Paresaca կայարանը գտնվել է Արշակունյաց Հայաստանում, իսկ նրանից հետո հիշատակվածները՝ Մասանյան Պարսկաստանում։ Հետևաբար, Paresaca-ն, որ ըստ հեղինակի հավանաբար նույնարժեք է Պարսք անվանը, գտնվել է հենց հայ-պարսկական սահմանագիծին¹⁸։ Սահմանն անցկացնելով Աշի-շայ գետով, Հ. Մանանդյանը բնականաբար պետք է գետից դեպի հյուսիս տեղագրեր հայոց թագավորների ստորպատականյան կալվածները, որ նա կոչում է Ատրպատական Արշայի Ի-ի¹⁹։ Անվանի պատմաբանի այս ոչ ճիշտ տեղագրության ակունքները դժվար չէ գտնել։ Արտաշատ—Պարեսական ճանապարհի Խոյ—Պարեսական հատվածն անցկացնելով Ուրմիո լճի հյուսիսային ափերով, հեղինակն ստիպված է եղել Պարեսակա-Պարսքը տեղագրել Թավրիզից բավականաչափ հարավ-տրևմուտք, Աշի-շայ գետից ոչ հեռու։ Նման տեղագրության դեպքում անշուշտ լացառվում է Աշի-շայ գետից հարավ ձեռական իշխանության հնարավորությունը։ Իրականում, ինչպես ցույց է տրված Ս. Երեմյանի բազմաթիվ բարոններում, հիշյալ ճանապարհահատվածն անցել է ներկայիս Զիրբար գետի հովտով, իսկ Պարեսակա-Պարսքն էլ գտնվել է Աշի-շայ գետի աջափնյակում, Թավրիզին հանդիման²⁰։ Այստեղից ճանապարհը մուտք էր գործում Մասանյան Պարսկաստան, որը և միանգամայն համապատասխանում է Փավստոս Բուղանդի հաղորդումներին։

Փավստոս Բուղանդը պահպանել է ևս մի քանի տեղեկություններ, որոնք մեր կարծիքով էապես նպաստում են հայոց թագավորների ձեռական իշխանության կալվածքների սահմանների ճշգրտմանը։ Ելնելով հետագա քննության շահերից, մենք հարկ ենք համարում դրանք մեջբերել։

1. «Եւ ելին (մաղքութենբեր—Բ. Հ.) լցին ծածկեցին զամենայն երկիրն Հայոց. քանդեցին, գերեցին, առ հասարակ աւերեցին. սփռեցան տարածեցան զսահմանօքն, լի և լի ծաւալեցան մինչև ի փոքր քաղաքիկն Սատաղու, և մինչև ի Դանձակ սահմանս Ատրպատական»²¹։

2. «Իսկ սահմանապահքն թագաւորին Հայոց (Արշակ II-ի—Բ. Հ.), որ նստէին ի Դանձակ Ատրպատականի, վաղ ազդ առնէին նմա զիրսն մինչև հասնայ ի նա ի սահմանս Ատրպատականի։ Ապա իբրև զայն զգայր թագաւորն Հայոց Արշակ, հրաման տայր Վասակայ իւրում սպարապետին՝ կազմել զամենայն զորս իւր, և հասանել ի դիմի հարկանել թագաւորին Պարսից Շապուհի... Սոքա հասանէին գերէին, այրացաւեր առնէին առ հասարակ գերկիրն Պարսից. և ինքեանք կային ունէին զնակատուն տեղի, այս ինքն զսահմանս Պարսից պահէին»²²։

3. «Եւ (սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը—Բ. Հ.) մինչև ի բուն ի սահմանսն ի Դանձակ Ատրպատականի գերկիրն յիւր վտարեալ, բռնացեալ ունէր»²³։

17 Հ ա կ ո Ր Մ ա ն ա ն դ յ ա ն. Երկեր, հ. Բ, Երևան, 1973, էջ 299—300։ Տե՛ս նաև՝ Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Հայաստանի ղեխավոր ճանապարհները ըստ Պետինգերյան քարտեզի. Երևան, 1936, էջ 165—166։

18 Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Հայաստանի ղեխավոր ճանապարհները, էջ 166։

19 Նույն տեղում, էջ 167, 169։

20 Ս. Ս. Երեմյան. Հայաստանը ըստ Աշխարհացոյց—ի. Երևան, 1963, էջ 77։ Տե՛ս նաև՝ Կից քարտեզը և այլն։

21 Փ ա վ ս տ ո ս Բ ո ղ ա ն դ, III, էջ ։

22 Նույն տեղում, IV, ԻԱ։

23 Նույն տեղում, V, Ա։

4. «Ապա գհետ լինէին փախստէիցն զօրքն Հայոց, և մինչև ի Գանձակ Ատրպայական ի սահմանս Հայոց հալածէին զգօրսն Պարսից»²⁴,

5. «Ապա ստրատն Յունաց կազմեաց զօրս իւր՝ որ ընդ իւրով ձեռամբ էին, և խաղացոյց տանել գնալ ի սահմանս Հայոց ի Գանձակ կուսէ յԱտրպայական տանէ»²⁵,

6. «Ապա Տէրէնդ զօրավարն զօրացն Յունաց և Մուշեղ զօրավար զօրացն Հայոց գհողակ մարդպետ, որ անուանեալ կոչէր ըստ գործոյն՝ հայր թագաւորին թողին զեա սահմանապահ ի Գանձակ, որ էր սահման ընդ Պարս և ընդ Հայս»²⁶,

7. «Խորհէր ևս (Մուշեղ Մամիկոնյանը—Բ. Հ.) ընդ իշխանսն Յունաց և նոքօք ընդ կայսերն, թէ պարտ է նոցա քաղաք մի շինել յերկրին Հայոց. ի մի մի գաւառսն, որ մին մի քաղաքս, որ երկուս-երկուս ամուր պարսպաւորս զօրանիստս հաստատել ընդ ամենայն երկրին Հայոց, մինչև ի Գանձակ սահման երկիւրն, որ Պարսից կուսէ էր, Հայոց սահման էր»²⁷,

Առաջին տեղեկութիւնը, որ վերաբերում է IV դարի 30-ական թթ. կացութիւնը, խոսում է, մեր կարծիքով, Գանձակի Պարսկաստանում գտնվելու օգտին: Սատաղ քաղաքիկը գտնվում էր Հռոմեական կայսրության տարածքում, ուստի բնական է ենթադրել, որ Սանեսան թագավորի մագթական հորդանները խուսափում էին կայսրության հետ բախվելուց և արշավանքի նպատակաւ եկն դարձել Մեծ Հայքի թագավորութիւնը: Մագթութիւնը արշավանքի էին ելել, ինչպես վկայում է Մովսէս Խորենացին, պարսից արքայից արքա Շապուհ II-ի դրդմամբ²⁸, հետևաբար նրանք չեն էլ մտածել Պարսկաստան ներխուժելու մասին, ուստի մնում է ենթադրել, որ ինչպես Սատաղը պատկանում էր կայսրությանը, այնպես էլ Գանձակը մտնում էր Երանշահի կամ Սասանյան Պարսկաստանի մեջ: Նման եզրակացության օգտին են խոսում նաև երրորդ, չորրորդ, հինգերորդ և յոթերորդ վկայությունները, որոնց համաձայն Հայոց թագավորութիւնը տարածվում էր մինչև Ատրպատականի Գանձակ քաղաքը կամ Գանձակի Ատրպատական երկիրը: Սակայն երկրորդ և վեցերորդ հաղորդումները մեզ են մատուցում միանգամայն այլ վարչական կացութիւն: Դրանց համաձայն Գանձակ քաղաքը գտնվում էր Հայոց թագավորության կազմում և հանդիսանում էր հայոց սահմանապահների զորակալան: Տեղեկությունների հակասականությունն ու իրարամերժությունը բնականորեն պետք է բերեն և, իրոք, ուսումնասիրողներին բերել են տարբեր եզրակացություններ: Եթե Հ. Մանանդյանը հայ-պարսկական սահմանը անցկացնում էր Լիւի-շալ գետով և հայոց թագավորների ատրպատականյան կալվածքները տեղադրում նրանից հյուսիս, ապա Հ. Մարկվարտը, Հ. Հյուբշմանը և Ն. Աղոնցը, հիմք ընդունելով Փավստոս Բուղանդի վերոհիշյալ տեղեկությունները, Արշակունյաց Հայաստանի և Պարսկաստանի սահմանը ենթադրում են Ատրպատականի Գանձակ քաղաքի մոտ²⁹: Ն. Աղոնցը գտնում է, որ «армянская сторона располагала большими владениями в Атропатене, в этом удостоверяют нас неоднократные утверждения Фауста, что границей Армении со стороны Атропатены являлся Гандзак и здесь стояла пограничная стража армянского царя»³⁰: Հիմք ընդունելով «Հուդուդ-ալ-Ալամի» տեղեկություն-

²⁴ Նույն տեղում, V, Դ:

²⁵ Նույն տեղում, V, Ե:

²⁶ Նույն տեղում, V, Զ:

²⁷ Նույն տեղում, V, ԴԳ:

²⁸ Մովսէս Խորենացի, III, Բ:

²⁹ J. Marquart. Eranšahr nach der Geographie des Ps. Moses Xorénac'i. Berlin, 1901, S. 109; հ. Հյուբշման. Հին հայոց տեղեկ անունները, Թարգմ. Զ. Բ. Պիլէ-գիւկյան. Վիեննա, 1907, էջ 90—91, Н. Адонц. Армения в эпоху Юстиниана. СПб., 1908, с. 226.

³⁰ Н. Адонц. Указ. соч., с. 226.

ները, հետաքրքիր եզրակացության է եկել Ս. Երեմյանը, Այն հանգամանքը, որ ըստ «Հուլիոս-ալ-Ալամի» անանուն պարսիկ աշխարհագրի ԴԵՀ-ՆԱՌԱԿԱՆԻ շրջանը, այսինքն Կապուտան լճի արևելյան ափամերձ տարածքը, համարվում էր Արմինիայի կամ Հայաստանի մաս, նրան հանգեցրել է այն մտքին, որ այդ ևրկրամասն էլ հանդիսացել է հայ թագավորների ատրպատականյան ձևական իշխանության երկիրը և զարգացած ավատատիրության շրջանում, IX—X դդ., լուկ ավանդույթի ուժով էր համարվում Հայաստանի մաս³¹:

«Հուլիոս-ալ-Ալամի» հեղինակը Արմինիայի մեջ է հիշատակում նաև Ահարը³², իսկ Մարաղան և Թավրիզը համարում է Ատրպատականի (Adharbadhagan) մաս³³: Թերևս հենց այս իրողությունն էլ հիմք է ծառայել Ս. Երեմյանի համար հայ-պարսկական սահմանագիծը անցկացնելու Թավրիզի արևմրտակողմով, Սոհունդ լեռով և Մարաղայի հյուսիսակողմով³⁴: Հարկ ենք համարում նշել, որ սույն տեղագրությունը իր տարածքային ընդգրկումով անհարիր է հեղինակի վերը բերված այն մտքին, թե 54 թ., երբ Տրդատը Վաղարշի կողմից հայկական զա՛ր բարձրացվեց, Մեծ Հայքին միացվեց Ատրպատականի մասը կազմող մի ընդարձակ տերիտորիա: Նշված տարածքը անգամ մեր օրերում, երբ Կապուտան լճի հայելին խիստ կրճատվել է, առանձնապես մեծ չէ և կազմում է շուրջ 3600—3700 կմ²: Սակայն վաղ միջնադարում լիճը զրադեցնում էր անհամեմատ մեծ տարածություն, իսկ ներկայիս Շահի թերակղզին մի մեծ կղզի էր, որ գտնվում էր գրեթե կենտրոնում³⁵: Ուստի, հաշվի առնելով նաև այդ պարագան, հիշյալ տարածքը կկազմեր ամենաշատը 2500 կմ²: Մեր խորին համոզմամբ, հստակ թե այդ աննշան տարածքը համարվեր Պարթևական տերության երկրորդի ձեռական իշխանության կալվածքը, երբ Մեծ Հայքի շատ նախարարներ, որոնց ռադմական կարողությունը կազմում էր ընդամենը 1000 հինվոր, իշխում էին նման մեծության տիրույթների³⁶: Հետևաբար, ձեռքի տակ եղած նյութերի ընձեռած հնարավորություններից ելնելով դանում ենք, որ Ս. Երեմյանի առաջարկած հայ-պարսկական սահմանագիծը Մարաղայի հյուսիսակողմով ընդունելի չէ: «Հուլիոս-ալ-Ալամի» տեղեկությունները, որչափ էլ կարևոր և արժեքավոր լինեն, այնուամենայնիվ ամբողջական չեն: Մեր կարծիքով, վերջին հաշվով ամենահավաստի տեղեկությունները հաղորդում է Փալստոս Բուզանդը, որոնց համաձայն էլ պետք է անցկացնել ձեռական իշխանության կալվածքների հարավային և արևելյան սահմանները: Եթե մի պահ վերանանք երկրորդ և վեցերորդ վիկայություններից, ապա մյուս հաղորդումների համաձայն կարելի է եզրակացնել, որ Ատրպատականի Գանձակ քաղաքը գտնվում էր հենց հայ-պարսկական սահմանագլխին: Հետևաբար, մինչև Գանձակ քաղաքն ընկած հողերը մաս էին կազմում Մեծ Հայքի թագավորության: Բնականաբար, նման

31 Ս. Ս. Երեմյան. Պայմանական հողատիրության առաջացման շուրջը ֆեոդալականացող Հայաստանում, էջ 6. Hudūd al—‘Alam, The Regions of the World, a persian Geography 372 A. H.—982 A. D., translated and explained by V. Minorsky. London, 1970, p. 143. § 36 Arminiya and Arrān... 9. DAKHARRAQAN (spelt: Dakharīab), a flourishing borough, with running waters, near the lake Kabūdhan“.

32 „Hudūd al—‘Alam“, p. 143. „AHAR, the chief place of Mīmodh, belonging to the kingdom of the son of Rawwad“.

33 Նույն տեղում, էջ 142.

34 Ս. Ս. Երեմյան. Արշակունիքի թագավորությունը՝ 298—387 թթ. (քարտեզ).— ՀՍՀ, հ. 2, էջ 112.

35 Ցակոտ ալ-Համալի.—Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Բ. Նալբանդյան. Երևան, 1965, էջ 33. «Նրա (Ուրմիո լճի—Բ. Հ.) մեջտեղը կա մի լիճ, որ կոչվում է Կապուտան և մի կղզի, որի վրա կան չորս գյուղակներ...»:

36 Н. А. ДОНЦ. Указ. соч., с. 251—252. 1500 հեծելակ զորս բերող Բագրատունիների ժառանգական տիրույթը Մպերում ուներ շուրջ 6300 կմ². տարածք, Անձիտի իշխանինը՝ 3500 կմ², Ապահունյաց իշխանինը՝ 2400 կմ², Մոկաց իշխանինը՝ 3000 կմ² և այլն.

եզրահանգման դեպքում բացատրության և լուսաբանության կարիք են զգում երկրորդ և վեցերորդ հաղորդումները, որոնց համաձայն Գանձակը գտնվում էր Մեծ Հայքի թագավորության մեջ և սահմանապահների զորակայան էր: Ցավոք, նշված տեղեկությունները հաստատում չեն գտնում Ամիանոս Մարկեղինոսի երկում, համաձայն որի Գանձակը Պարսկաստանի Մարաստան երկրամասի խոշոր քաղաքներից էր. «Per haec loca civitates dispersae sunt plures, quis omnibus praestant Zombis et Patigran et Gazaca»³⁷. Առաջացած հակասությունը Հ. Մանանդյանը փորձել է լուծել երկրորդ վկայության «Իսկ սահմանապահքն թագաւորին Հայոց, որ նստէին ի Գանձակ Ատրպատականի» արտահայտությունը խմբագրելով «Իսկ սահմանապահքն թագաւորին Հայոց, որ նստէին ի (սահմանս) Գանձակ Ատրպատականի»: Հստ որում, նրա կարծիքով, Գանձակը նշված և այլ վկայություններում ոչ թե քաղաքի անունն է, այլ «Գանձակ սահման երկրի»³⁸: Այս ընդհանուր առմամբ հավանական տեսակետը, սակայն, քննադատության չի դիմանում, երբ դիմում ենք վեցերորդ տեղեկությանը, ըստ որի Հայր մարդպետին հունաց զորավարն ու հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը թողել էին «սահմանապահ ի Գանձակ, որ էր սահման ընդ Պարս և ընդ Հայս»: Մենք հակված ենք կարծելու, որ այստեղ պատմիչը որոշակիորեն խոսում է Գանձակ քաղաքի մասին, որպես երկու պետությունները միմյանցից բաժանող բնականալարի: Փրկարար «սահման» բառը ոչ մի կերպ ավելացնել և նորովի հասկանալ այս հատվածը հնարավոր չէ: Մի քանի վկայություններում Գանձակ տեղանունը կարող է ընկալվել որպես Պարսից տերության երկրամաս, սակայն աներկբա է, որ մասնավորապես առաջին, երկրորդ, երրորդ և վեցերորդ տեղեկություններում այն քաղաքի անունն է: Ավելին, միանգամայն տրամաբանական է կարծել, որ Գանձակ Ատրպատականի ասելով հեղինակը ոչ թե հասկացել է Գանձակի Ատրպատականը, ինչպես կարծում է Հ. Մանանդյանը³⁹, այլ Ատրպատականի Գանձակը: Ընդհանուր է, պատմիչը իր երկում այլ Գանձակներ չի հիշում, սակայն նա շփոթ թույլ չտալու համար որոշակիացրել է, թե որ Գանձակ քաղաքին է վերաբերում այս կամ այն իրադարձությունը: Հետևաբար, մնում է բացատրել, թե ինչու են իրար հակասում Ամիանոս Մարկեղինոսի և Փավստոս Բուզանդի հաղորդումները: Կարծում ենք, որ միակ հնարավոր բացատրությունն այն է, որ Գանձակը թեկուզ մի աննշան հատվածով պատկանում էր Մեծ Հայքի թագավորությանը: Այդ հարթ և տափարակ տեղանքում քաղաքը երկու պետությունների միջև բաժանող բնական սահմանագիծ կարող էր լինել միայն գետը: Ամենայն հավանականությամբ, քաղաքը որպես այդպիսին գտնվում էր Պարսից տերության սահմաններում, հանգամանք, որ արձանագրել է Ամիանոսը, սակայն գետի հայկական ափին գտնվող փոքրիկ թաղամասն անգամ իրավունք է տվել հայոց պատմիչին գրելու, որ Ատրպատականի Գանձակում էին նստում հայոց արքայի սահմանապահները: Առաջին հայացքից միանգամայն անհավանական և անընդունելի այս տեսակետը, ըստ մեզ, իր հիմնավորումն է գտնում Փավստոսի մեկ այլ տեղեկության մեջ: Համաձայն պատմիչի, պարսից թագավոր Շապուհ II-ը, կամենալով ձեռք բերել հայոց Արշակ թագավորի բերեկամությունը, առաջարկում է «...զղուստր իմ կնութին Արշակայ արքայի Հայոց, և տաց նմա տուն մեծ. զի յորժամ գնասցէ ի Հայոց գալ առ մեզ, այնպէս տացուք նմա տուն, զի ի Հայոց մինչև ի Տիգրէոն մինչև առ մեզ համակ յիւրում տան ագցի, մինչև առ մեզ եկեսցէ»⁴⁰: Գանձակը Սառանյան

³⁷ Ammianus Marcellinus. Römische Geschichte. lateinisch und deutsch und mit einem Kommentar versehen von Wolfgang Seyfarth. III Teil. Akademie-Verlag-Berlin, 1971, 23, VI. 39.

³⁸ Հ. Մանանդյան. Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 170: Նույնի՝ Երկեր, հ. Բ, էջ 293—299.

³⁹ Հ. Մանանդյան. Երկեր, հ. Բ, էջ 298.

⁴⁰ Փավստոս Բուզանդ, IV, Ի.

պետության կարևոր կրոնատեղիներից էր և, հավանաբար, պարսից թագավորի աթոռանիստներից մեկը: Հիշյալ դեպքերի ժամանակ, մեր ընկալմամբ, խոսքը գնացել է ոչ թե Տիգրոս մայրաքաղաքի, այլ Գանձակ աթոռանիստի մասին, որն ընկալվելով որպես մայրաքաղաք՝ պատմիչի կողմից նույնացվել է Տիգրոսին և դրանով իսկ նկարագրվող դեպքերին հաղորդել գրեթե հերթաթային բնույթ: Պատահական չէ, որ անդրադառնալով հիշյալ տեղեկությանը, Ն. Ադոնցը գրել է. «Эти слова, независимо от сказочной окраски, подтверждают договорное положение 298 года относительно пределов Армении со стороны Атропатены»⁴¹: Սահմանն իրոք այնպիսին էր, որ մինչև Գանձակ աթոռանիստը հայոց թագավորը կարող էր անցնել հայկական հողերով: Աթոռանիստը, հասկանալի է, պատկանելու էր պարսիկներին: Հայ-պարսկական սահմանագծի բնության առնված հատվածի ճշտումը մեծապես կախված է Գանձակ կամ Գանձակ Շահաստան քաղաքի դիրքից, որը ուսումնասիրողները տեղադրում են Թախտ-ի Սուլեյմանի ավերակների տեղում կամ ներկայիս Լայլան (Էյլլան) բնակավայրում: Արդեն այն փաստը, որ նշված տեղադրությունները իրարից խիստ հեռու են, ենթադրել է տալիս, որ նրանցից մեկնումեկը ոչ մի դեպքում Գանձակի հետ նույնանալի կարող: Առաջին անգամ Գանձակի տեղադրությանը դրադել է Հ. Ռոուլինսոնը և այն նույնացրել Թախտ-ի Սուլեյմանի ավերակներին⁴²: Այս տեղադրությունը պաշտպանել են Գ. Հոֆմանը և Ա. Ջեկսոնը⁴³, Գերմանացի նշանավոր հայագետ Հ. Մարկվարտը դարիս սկզբին համակարծիք լինելով այդ տեսակետին⁴⁴, 30-ական թթ. գտնում էր, որ Գանձակ Շահաստանը գտնվել է Լայլան գյուղի մոտ, իսկ Պլուտարքոսի, Պտղոմեոսի, Դիոն Կասիոսի և Ստրաբոնի Բյուզանդացու կողմից հիշատակված Փրասպան (Πρασσαί) Թախտ-ի Սուլեյմանում⁴⁵: Հ. Մանանդյանը նույնացնում էր Գանձակը Փրասպային և տեղադրում Թախտ-ի Սուլեյմանում⁴⁶: Վ. Մինորսկին Գանձակը տեղորոշում էր Մարաղայից հարավ՝ Լայլան գյուղի մոտ, իսկ Թեբարմայիսը կամ Թեբարմայիսը, նույնացնելով Շիդին, տեղադրում Թախտ-ի Սուլեյմանում⁴⁷, իր «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի» աշխատության մեջ և լատմամբիլ բարեփոխելով Գանձակը Լայլան գյուղի տեղում է ցույց տալիս նաև Ս. Նրեմյանը⁴⁸: Ռ. Ֆրայը Գանձակը նույնացրել է Թախտ-ի Սուլեյմանին, հետևաբար նաև Շիդին⁴⁹, շեղվելով ամերիկյան հնագետների ուսումնա-

⁴¹ Н. Адонц. Указ. соч., с. 227.

⁴² H. G. Rawlinson. Memoir on the Site of the Atropatenian Erbatana.—Journal of the Royal Geographical Society. 1841, Vol. X.

⁴³ Auszüge aus Syrischen Akten persischen Martyrer, übersetzt und durch untersuchungen zur historischen Topographie, erläutert von Georg Hoffmann. Leipzig, 1880, s. 250—252. A. V. W. Jackson. Persia Past and Present. A Book of Travel und Research. New York, 1906, p. 136.

⁴⁴ J. Marquart. Erānšahr, s. 108. Գանձակը և Փրասպան նույնացնելու և Թախտ-ի Սուլեյմանում տեղադրելու վարկածը տեղ է գտել RE-ում (Paulus Realencyclopädie der Classischen Altertums-Wissenschaft. Erste Reihe, 13. Halbband, Stuttgart, 1910, s. 886—887):

⁴⁵ J. Markwart. Südarmenien und die Tigrisquellen. Wien, 1930, s. 402. J. Markwart. A Catalogue of the provincial Capitals of Eranshahr (Pahlavi text, version and Commentary). Roma, p. 22, 29, 108—110.

⁴⁶ Հ. Մանանդյան. Երկեր. հ. Ա, Երևան, 1977, էջ 260:

⁴⁷ V. Minorsky. Roman and Byzantine Campaignes in Atropatene. — Iranica, twenty Articles, Tehran, 1964, p. 92—97.

⁴⁸ Ս. Նրեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 46: Տե՛ս կից բարեփոխված աշխ.

⁴⁹ Ричард Фран. Наследие Ирана. М., 1972, с. 197, 301, 316, 326.

սիրությունների վրա, Գանձակի տեղադրությունը Թախտ-ի Սուլեյմանի տեղում պաշտպանել է Մոհամմադ Ջավադե Մաշքուրը⁵⁰։

Սկզբնաղբյուրների քննությունը, մեր կարծիքով, աներկբա է դարձնում Գանձակի տեղորոշումը Հայլան գյուղի մոտ։ Իսկ ինչ են վկայում մեզ հասած աղբյուրները։ Այսպես, Ստրաբոնը, անդրադառնալով Ատրպատականի թագավորների աթոռանիստներին, գրում է. «Ատրպատենի թագավորների ամառանային պալատը գտնվում է Գազակա (= Գանձակ) քաղաքում, որ շինված է դաշտավայրի մեջ, իսկ ձմեռանայինը՝ Վերա ամուր բերդաքաղաքում, որ Անտոնիոսը պաշարեց Պարթևաց արշավանքին։ Այս քաղաքը 2400 ստագիոն հեռու է Արաքս գետից, որ բաժանում է Հայաստանը Ատրպատենից, ինչպես ասում է Դեկլիոս՝ Անտոնիոսի բարեկամը, որ նկարագրեց նրա արշավանքը Պարթևաց դեմ, ուր ներկա էր նաև ինքը և մասնակցեց իբր գորավար»⁵¹։ Այս հիշատակության մեջ խիստ արժեքավոր է այն վկայությունը, որ Գանձակը գտնվել է դաշտավայրում և Անտոնիոսի զորքերի կողմից պաշարվել է Վերա⁵² բերդաքաղաք արքայանիստը, որն Արաքսից հեռու է գտնվել 2400 ստագիոն։ Հարկ է նշել, որ Ռ. Ֆրայը իզուր է կասկածի տակ առնում Վերայի առանձին քաղաք լինելը, թեկուզև Հ. Մարկվարտը այն համարել է Գանձակի միջնաբերդ⁵³։ Ամերիկացի արևելագետը բնավ էլ պարտագիր չի համարում Վերայի նույնացումը Փրասպայի հետ և հակված է ընդունելու Վ. Մինորսկու տեղադրությունը Մարաղայի շրջանում⁵⁴։ Ինչ վերաբերում է Փրասպային, ապա Դիոն Կասիոսը, Պտղոմեոսը և Ստեփան Բյուզանդացին վկայում են, որ այն եղել է Գանձակից տարբեր քաղաք, հետևաբար Հ. Մանանդյանի փորձը դրանք նույնացնելու ուղղությամբ քննություն չի բռնում։ Դատելով Պլուտարքոսի և Դիոն Կասիոսի հաղորդումներից, որ Անտոնիոսը իր արշավանքի ժամանակ պաշարել էր Փրասպա քաղաքը, իսկ ըստ Ստրաբոնի՝ Վերան, առանց դժվարության կարելի է նույնացնել Վերան և Փրասպային։ (Կարծում ենք, որ սխալ է Ս. Երեմյանի կողմից Վերայի տեղադրությունը Արտավեստ-Արդաբիլում)։ Ըստ երույթին Ստրաբոնը շփոթել է քաղաքավան արտասանությունը, որի հետևանքով «Ֆ»-ն ընկալվել է որպես «վ» և «Ֆրա»-ն վերածվել է «Վերա»-ի։ Վերջապես, Արաքսից 2400 ստագիոն հեռավորության վրա գտնվող Վերան ո՛չ կարող էր գտնվել Մարաղայի շրջանում և ո՛չ էլ Գանձակում, որն, ինչպես կտեսնենք, իրոք գտնվում էր Հայլանի մոտ։ 2400 ստագիոնը ատտիկյան ստագիոններով՝ 461,448 կմ։ Անկասկած է, որ հայ-հռոմեական զորքերը Արաքս-Նրասխր հատեցին Զուղա-Զուլֆայի շրջանում, սակայն գետի այդ հատվածից մինչև Գանձակ անհամեմատ փոքր տարածություն է, որ ենթադրել է տալիս, որ Վերա-Փրասպան գտնվել է Գանձակից դեպի հարավ-արևելք։ Կարծում ենք, որ նման ենթադրության օգտին է խոսում նաև Պլինիոս Ավագի տեղեկությունն այն մասին, որ Գանձակը հավասարաչափ՝ 450 մղոն հեռու էր Մեծ Հայքի մայրաքաղաք Արտաշատից և Մեծ Մարաստանի մայրաքաղաք Նկրատան-Համադանից⁵⁵։ Այս վկայության մեջ էականն այն է, որ հիշյալ քաղաքները գտնվում էին Գանձակից հավասար հեռավորության վրա, հանգամանք, որ համապատասխանում է իրականությանը Գանձակը Հայլանի տեղում գտնվելու դեպքում և բացառ-

50 Մոհամմադ Ջավադե Մաշքուր. Նազարի բե Թարիխե Ազարբայջան վա ասարե րասթանի վա ջամի'աթշենսախյե ան. Թեհրան, Բահման 1349, էջ 110—113 (արաբերեն)։

51 Ստրաբոն. Քաղեց և թարգմանեց Հ. Յճառյան. Երևան, 1940, էջ 48—49։

52 Ս. Երեմյանը բաղաբանունը տալիս է «Վերե» գրությամբ։

53 J. Marquart. Erānšahr. s. 108.

54 V. Minorsky. Op. cit., p. 106; P. Фрай. Наследие Ирана. с. 197.

55 Pliny. Natural History. With an english trans. in ten Volumes. VI, 42:

վում է Թախտ-ի Սուլեյմանի հետ նույնացվելու դեպքում: Գանձակ Շահաստանի տեղադրության համար արժեքավոր են հայկական «Մղոնաշափր»-ի, Սերևոսի, Թովմա Արծրունու, Թևոփանես խոստովանողի, Թևոփիլակտես Սեմոկատայի, «Ջատկական ժամանակագրության» և արարական հեղինակների տեղեկությունները: Համաձայն «Մղոնաշափր»-ի նախնավանից Գանձակ Շահաստան և Գանձակ Շահաստանից նինվե 120 մղոն էր⁵⁶: Եվ իրոք, հիշյալ բաղաժների միջև ընկած հեռավորությունը գործնականում հավասար է, և՛ ի՛նչ Գանձակը տեղադրում ենք կայանի մոտ: Թախտ-ի Սուլեյմանի հետ նույնացնելու դեպքում, և՛ ի՛նչ անգամ ենթադրենք այնպիսի երթուղի, որ ապահովեր հավասարաչափ հեռավորություն հիշյալ բաղաժներից, ապա միջբաղաժնյալի հեռավորությունը մեծապես գերազանցում է 120 մղոնը: Խոսելով բյուզանդական կայսր Հերակլի դեպի Պարսկաստան կատարած արշավանքի ընթացքի մասին, Սերևոսը գրում է. «Չունեաց դնաց Երակոս ճի հազարալ՝ երթալ ի դուռն թագաւորին Պարսից. և ճանապարհ կալեալ ընդ կողմանս ճիւսիսոյ՝ ել ղէպ ուղիղ ի Կարնոյ քաղաք և հասեալ ի Դուին արարատեան՝ աւերէ, գնա և գնախնաւան: Եւ ղիմեալ ի Գանձակ Լատրպատականի՝ կործանէ և դրացինս Հրատին մեծի, որում Վշնասպն կոչէին»⁵⁷: Նախքան սույն հատվածի վերլուծության անցնելը, քննության շահերից ելնելով, հարկ ենք համարում մեզ բերել Թովմա Արծրունու՝ սույն իրադարձություններին նվիրված լիակատրությունները, համաձայն որոնց Հերակլը «...ճանապարհ արարալ ընդ կողմնս ճիւսիսոյ ել ղէպ ուղիղ ի Կարնոյ քաղաք, և անցանէ ի Շիրակ, եւ հասեալ ի Դուին աւերէ գնա, եւ գնախնաւան, եւ ղՈրմի, եւ ղիմեալ ի Գանձակն Ատրպատականի, բրէ դնա, աւերէ ղԱհմադան եւ ղՄայ, կործանէ վրազին Հրատին մեծի, որում Վշնա[ս]պն կոչեն, եւ լնուն թովական որ լանդիման Հրատին՝ դիակամբը»⁵⁸: Եթե շունենայինք Թովմայի այս արժեքավոր տեղեկությունը, ապա, ելնելով սույն Սերևոսի հաղորդումից, կարող էինք հանգել այն սխալ եզրակացությանը, որ Հրատն մեծ բազմաթիվ կամ Վշնասպր գրությունները է Լատրպատականի Գանձակում, Իրականում Սերևոսի հիշյալ հատվածում ինչ-որ բան պակաս է: Երկու հեղինակների հաղորդումների քննությունը որոշակիորեն ցույց է տալիս, որ Թովման օգտվել է Սերևոսի երկից և տեղ-տեղ ըստադրել, ուստի՝ հենվելով Թովմայի տեղեկության վրա, գտնում ենք, որ Լատրպատականի Գանձակին վերաբերող հատվածը Սերևոսի երկում սկզբնապես ունեցել է ներքոհիշյալ տեսքը. «Եւ ղիմեալ ի Գանձակ Լատրպատականի՝ [բրէ դնա, աւերէ ղԱհմադան եւ ղՄայ], կործանէ դրազին Հրատին մեծի, որում Վշնասպն կոչէին»: Պարզապես գրիչների կողմից տող լայն թողնելու հետևանքով նշված հատվածը աղավաղվել է: Թովմա Արծրունին օգտվել է, ինչպես դժվար չէ համոզվել, լիարժեք ձեռագրից: Այսուհանդերձ, աներկբա է, որ Թովման իր տրամադրության տակ ունեցել է այլ աղբյուրներ ևս, որոնք և նրա հաղորդմանը փոխանցել են արժեքավոր մանրամասնություններ, ըստ որոնց Հերակլի զորքերը Գանձակ են շարժվում ոչ թե Ուրմիո լճի արևելյան, այլ արևմտյան ափով, որտեղ ավերել են Ուրմի քաղաքը և որ Հրատն մեծը Գանձակից տարրեր վայր է, որտեղ բազմաթիվ հանդիման մի ծովակ է գտնվել, ուր բյուզանդացիները նետում են սպանվածների դիակները: Դժվար է գերազանահատել Թովմա Արծրունու տեղեկության արժեքը, որովհետև այն աներկբա ցույց է տալիս, որ Հրատն Մեծը նույնական է Թախտ-ի Սուլեյմանին: Վերջինս, համաձայն Մոհամմադ Ջավադի Մաշրուրի նկարագրության, գտնվում է Նուսրաթաբադ գյուղից 2 կմ հյուսիս-արևելք, Թեքար քաղաքից 42 կմ հեռավորության վրա, ծովի մակերևույթից 2400 մետր բարձր: Ամրոցը, որի պարիսպները շուրջ 1200 մետր պարագիծ

56 «Վասն դիտութեան մղոնաշափր», աւճա Ա. Աբրահամյան. Անանիա Շիրակացու ճատենագրությունը. Երևան, 1944, էջ 355:

57 Պատմութիւն Ուրմիոյ, աշխատասիրութեամբ Գ. Վ. Արզարյանի. Երևան, 1979, էջ 124:

58 Պատմութիւն տանն Արծրունեաց ի Թովմայ Վարդապետէ Արծրունոյ. Կոստանդնուպոլիս, 1852, էջ 102:

ունեն, հիշեցնում է մի կողմից մի փոքր ճգմված ձու, որի գրեթե կենտրոնում գտնվում է բավական ընդարձակ մի լճակ⁵⁹։ Բերդի արևմտյան կողմում, լճակից ոչ հեռու, պահպանվել են հին շինությունների մնացորդներ⁶⁰, որոնց մի մասը անկասկած Հրատն Մեծ բազիլի ավերակները պետք է լինեն։ Կարծում ենք, որ անգամ առանց այլ սկզբնաղբյուրների օգնության դիմելու, բերված տեղեկությունների լույսով բացառվում է Թախտ-ի Մուլեյմանի որևէ առնչությունը Գանձակին, որովհետև ոչ թե Գանձակում, այլ Թախտ-ի Մուլեյմանում էր գտնվում պարսից հեթանոսական կարևոր կրոնատեղիներինց մեկը՝ Հրատն Մեծը։ Հայկական սկզբնաղբյուրներին լրացնում են բյուզանդական հեղինակների վկայությունները։ Ինչպես տեղեկացնում է Թևոփանես խոստովանողը, Հերակլ Վկայսրը գրավեց Գանձակ քաղաքը, որի արվարձաններում իր զինվորներին հանգիստ տվեց։ Կայսեր կողմն անցած պարսիկներն ասում էին, որ խոսրովը, փախուստի դիմելով, այդ շրջանում եղած ամեն ինչ կրակի տվեց։ Նա եկավ արևելքում գտնվող Թեբարմայիս քաղաքը, որտեղ էին գտնվում Հրո տաճարը, լյուղացոց թագավոր Կրեսոսի գանձերը, ինչպես նաև ածուխների մոլորությունը, որոնք առնելով շարժվեց դեպի Դաստակերտ։ Իսկ կայսրը Գանձակից դուրս գալով, հասնում է Թեբարմայիս, մտնում քաղաք և կրակի տալիս Հրո տաճարը⁶¹։ Համադրելով Թեոփանեսի և Թովմա Արծրունու տեղեկությունները, կարելի է հանգել միակ ընդունելի եզրակացությանը՝ որ Հրատն Մեծը բազիլի անունն էր, իսկ քաղաքը կոչվում էր Թեբարմայիս։ Հետևաբար Թեբարմայիսի նույնացումը Ուրմիա քաղաքին, որ կատարում էր Անվիլը⁶², ինչպես ճիշտ նկատել է Հ. Մանանդյանը⁶³, սխալ է։ Գ. Հոֆմանի ենթադրությամբ Թեոփանեսի բնագրում շփոթ կա, ուստի Թյթարաձե-ը առաջարկում է ուղղել և կարդալ Եդթարաձե և այն կապել Beth—Armaye երկրամասի անվան հետ⁶⁴։ Եթե Թեոփանեսի Թեբարմայիսը նույնական է Մենանդրոսի Βιθαρμαζ վայրին, որտեղ բյուզանդական դեսպան Պետրոս Պատրիկիոսը 562 թ. այցելել է պարսից արքային⁶⁵, ապա ուղղումը ճիշտ է, սակայն վերջինիս նույնացումը Beth-Armaye-ի հետ՝ հիմնովին սխալ է։ Վ. Մինորսկին գտնում է, որ սրբազան կրակը Ատրոպատականի Գանձակից տեղափոխվել է Թեբարմայիս, սակայն գտնում է, որ այդ կատարվել է ոչ թե Արտաշիրի օրոք, այլ խոսրով Անուշիրվանի իշխանության տարիներին⁶⁶։ Միսարի տեղեկության համաձայն 700 տարի շարունակ կրակի տաճարը գտնվել է Շիղում, սակայն հեղինակը ոչինչ չի ասում սրբազան կրակը Գանձակից Շիղ տեղափոխելու մասին։ Մասուդին հաղորդում է, որ խոսրով Անուշիրվանը կրակը Շիղից տեղափոխում է Ալ-Բիրկահ կոչված վայրը, իսկ Ալ-Համազանին հայտնում է, որ Adharzushnasp-ը, սրբազան կրակը, Անուշիրվանը տեղափոխեց Շիղ։ Ասմային հայտնում է, որ Շիղում մեծ կրակի տաճար կար, որ մնացել էր մինչև իր օրերը։ Թաբարու վկայությամբ Բահրամ Գոռը Շիղի կրակի տաճարին է ուղարկում այն հարստություններն ու գանձերը, որ նա ավար էր վերցրել խաքանին հաղթելով։ Խորդադրեհի ասելով Ջանզան խոսրով Փարվեզի քաղաքն էր, իսկ Շիղում գտնվում էր Աղար-

⁵⁹ Թախտ-ի Մուլեյմանի ամրոցի ներսում լճակի գոյության փաստի կարևորության վրա ուշադրություն է դարձրել նաև է. Դանիելյանը, գտնելով, որ այն Ուրմիան չէ։

⁶⁰ Մոհամմադ Ջավահիր Մաշրուր. Նշվ. աշխ., էջ 111—115։

⁶¹ Թեոփանես խոստովանող, Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաշ Բարթիկյանի. Երևան, 1983, էջ 22։

⁶² S. b. u. Mém. d'Acad. des inser. et Belles Lettres, t. 32, p. 560.

⁶³ Я. Манаян. Маршруты персидских походов императора Ираклия.— 2. Մանանդյան, Երևան, հ. Ե, Երևան, 1984, էջ 382։

⁶⁴ G. Hoffman. Auszüge aus syrischen Akten..., s. 252.

⁶⁵ Թևոփանես խոստովանող, էջ 232։

⁶⁶ V. Minorsky. Op. cit., p. 99—100.

գոյնաստի կրակի տաճարը: Ղազվինին հիշում է Շիգի լիճը, պարիսպները և կրակի տաճարը, իսկ Յակուտ ալ-Համալին հայտնում է, որ Գանձակ-Ջազ-նակը գտնվում էր Մարաղայից 6 փարսախ հեռավորության վրա և այնտեղ ինչ գտնվում կրակի տաճարն ու Քեյ-հոսրովի կառուցած հին պալատը⁶⁷: Փաստերի համադրությունը բերում է հետաքրքիր եզրակացությունների: Անկասկած է դառնում, որ Թախտ-ի Սուլեյմանը նույնական է ոչ միայն Հրատն Մ.Ո.ին և Թերարմայիսին, այլև Շիգին, որովհետև վերջինում ևս հիշատակվում են լիճն ու կրակի տաճարը: Ուշագրություն է գրավում այն փաստը, որ ըստ ալ-Համադտնու Աղար-Գուշնասպի կրակը տեղափոխվել է Շիգ, իսկ ըստ Մասուդիի՝ հոսրով Անուշիրվանը այն տեղափոխել է ալ-Բիրկահ՝ կոչված վայրը: Ոչ պակաս հետաքրքիր է և այն փաստը, որ կրակի տաճարը 700 տարի գրտնում է Շիգում և որ Բահրամ Գոռը մասնավորապես Շիգ է ուղարկել խաբանից խլած հարստությունները: Ի մի բերելով նշված փաստերը, մենք կարծում ենք, որ իրականում տեղի է ունեցել սրբազան էրակի տեղափոխության երկու դեպք: Առաջին տեղափոխությունը կատարվել է ամենայն հավանականությամբ մ. թ. III դարում Ալուտաշի Պապականի օրոք: Սասանյանների կողմից պետական իշխանությունը գրավելուց հետո Գանձակը, որ գտնվում էր հայ-պարսկական սահմանագլխին, գտնվում էր մշտական հարվածի ներքո Սասանյաններին թշնամի Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության կողմից: Ինչպես է, որ հայ-պարսկական պատերազմների ժամանակ հայկական զորքերը ավերում և ասպատակում էին Գանձակ քաղաքը, որը և պետք է ստիպելու Արտաշիրին այդ կարևոր սրբատեղին տեղափոխելու լավ ամրացված և անառիկ Թերարմայիս: Նրկորդ տեղափոխությունը կատարվել է, մեր կարծիքով, Թերարմայիս-Շիգից ալ-Բիրկահ ոչ թե հոսրով Անուշիրվանի, այլ հոսրով Փարվեզի նախաձեռնությամբ: Կրակի տաճարի տեղափոխությունն, անշուշտ, նշանակում էր սրբազան էրակի տեղափոխություն, որի մասին Թեոփանեսը հոստովանողը գրում է, որ հոսրովը դալիս է Թերարմայիս քաղաքը. «...որտեղ էին գտնվում Հրո տաճարը, լյուդացոց թագաւոր Կրևուսի գանձերը, ինչպես նաև ածուխների մոլորությունը, որոնք առնելով շարժվեց Դաստակերտ»⁶⁸, նախ Կրեսոս թագավորի գանձերի հիշատակությունը, որ ավելի շատ ավանդական է, որովհետև դժվար է ասել, թե Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից հետո դրանք ուր տեղափոխվեցին, ցույց է տալիս, որ Թերարմայիսը արքունի գանձատներից մեկն էր և պատահական չէ, որ Բահրամ Գոռը խաբանին հաղթելուց հետո հենց այդ քաղաքն էր ուղարկել ավար վերցրած գանձերը: Ինչ վերաբերում է ածուխների մոլորությանը, ապա հավանաբար ատրուշանի կրակը վառ էր պահվում ինչ-որ հատուկ ծառատեսակի բնափայտով, որը և պարսից արքան գանձերի հետ միասին վերցնելով շարժվում է Դաստակերտ: Իսկ սրբազան կրակը, հավանաբար, հենց նա էլ ուղարկեց ալ-Բիրկահ, որը Ջեկսոնը տեղագրել է Շիրազում⁶⁹: Հետագայում, երբ շատ իրադարձություններ և մեծագործություններ կապվել են հոսրով Անուշիրվանի անվան հետ, այս իրադարձությունն էլ վերագրվել է նրան:

(Շարունակելի)

⁶⁷ Արարա-պարսկական հեղինակների տեղեկությունները քաղվել են A. V. Williams Jackson. Persia past and present (էջ 133—136) և V. Minorsky. Roman and Byzantine Campaigns in Atropatene (էջ 92—100) աշխատություններից:

⁶⁸ Թեոփանեսը հոստովանող, էջ 22:

⁶⁹ A. V. Williams Jackson. Persia past and present, p. 135.